ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 572-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 61 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 53 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արենի համայնքի ղեկավարի կողմից 2024թվականի մարտի 11-ին տրված թիվ 61 նախագծման թույլտվության մեջ կատարել փոփոխություն՝

առաջին պարբերության «Մեկ հարկանի բնակելի տուն՝ նկուղով 11,70x10,40մ արտաքին չափերով» բառերը և թվերը փոխարինել « Մեկ Հրականի բնակելի տուն՝ պատշգամբով և ավտոտնակով, 16,70x8,00մ արտաքին չափերով» բառերով և թվերով:

2. Արենի համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի մարտի 14-ին տրամադրված թիվ 53 շինարարության թույլտվությունների մեջ կատարել փոփոխություն՝

առաջին պարբերության «Մեկ վերգետնյա հարկով բնակելի տուն՝ 11,70x10,40մ արտաքին չափերով» բառերը և թվերը փոխարինել «Մեկ վերգետնյա հարկով բնակելի տուն՝ պատշգամբով և նկուղով, 16,70x8,00մ արտաքին չափերով» բառերով և թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**